

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لویس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Բրյուսելում ստորագրվեց ՀՀ-ԵՄ նոր համաձայնագիրը



Այս համարում

Հայերեն բաժին

1-	Խմբագրական.....	0
2-	Հայաստանի Հանրապետություն.....	1
3-	Արևմտյան Հայաստան.....	4
4-	Սփյուռք.....	5
5-	Միջազգային.....	7
6-	Մշակույթ.....	8

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....	0-2
Աղվանք, Ադրբեջան.....	2-6

Շապիկի առաջին էջում՝ Մասունցի դավիթ

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 229, Նոյեմբեր 2017 No. 229, October 2017

ماهنامه لویس - شماره ۲۲۹ آذر ماه ۱۳۹۶

Մշակույթային և Հասարակական Ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Դարախանյան, Վահիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկղ 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغدادساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۹۴۸۸-۱۵۸۷۵

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Համաձայնագիրը նոր գլուխ է բացում Հայաստանի ու Եվրոպական Միության հարաբերություններում. ԱԳ նախարար



Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումը դարձավ այս զագաթաժողովի հիմնական ձեռքբերումներից մեկը: Այդ մասին ասել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը համաձայնագրի ստորագրումից հետո:

Նրա խոսքով, այս համընդգրկուն և հավակնոտ համաձայնագիրը մեր համատեղ ձեռքբերումն է, որը նոր գլուխ է բացում Հայաստանի ու Եվրոպական Միության հարաբերություններում: «Այն կույր իրավական հիմք է հանդիսանում քաղաքական երկխոսության ամրապնդման, տնտեսական ու ոլորտային համագործակցության ընդլայնման, առևտրի ու ներդրումների համար նոր հնարավորությունների ստեղծման, և շարժունակության մեծացման համար՝ ի շահ մեր քաղաքացիների», - նշել է Նալբանդյանը և հավելել. «Համաձայնագիրը նոր խթան կհանդիսանա ժողովրդավարական հաստատությունների, մարդու իրավունքների, օրենքի գերակայության ամրապնդման ուղղությամբ Հայաստանում ընթացող քարտեզի դրամների համար»:

Ըստ ԱԳ նախարարի, կարելի է, որ համաձայնագիրը վերահաստատում է Եվրոպական Միության հայտարարված հանձնառությունը աջակցելու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման ջանքերին ու մոտեցումներին՝ հիմնված միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների վրա, մասնավորապես՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման և տարածքային ամբողջականության:

«Հայաստանը պատրաստակամ է այսուհետ ևս զարգացնել և ամրապնդել ԵՄ հետ համապարփակ համագործակցությունը երկկողմ հետաքրքրություն ներկայացնող բոլոր բնագավառներում՝ հիմնվելով այս համաձայնագրի վրա և հաշվի առնելով մեր հանձնառությունները այլ ինտեգրացիոն ձեռագրերում:

Հավատացած ենք, որ նախորդ տարիներին մեր ունեցած ձեռքբերումները կույր հիմք են հանդիսանում շարունակելու ու առավել ընդլայնելու մեր գործընկերությունը և, անշուշտ, այս նոր համաձայնագիրը մեր հարաբերությունները կբարձրացնի որակական նոր մակարդակի», - ասել է նախարարը:

Հայաստանի Հանրապետություն

Բրյուսելում ստորագրվեց Տրանսվրոպական տրանսպորտային ցանցի դեպի Հայաստան ընդլայնման փաստաթուղթը

24.11.2017



Նոյեմբերի 24-ին Բրյուսելում ՀՀ Նախագահի գլխավորած պատվիրակության կազմում գտնվող ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ Եվրամիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին ստորագրեցին Տրանսվրոպական տրանսպորտային ցանցի դեպի Հայաստանի Հանրապետություն ընդլայնման բարձր մակարդի փոխըմբռնման արձանագրությունը: Փաստաթուղթը միտված է Եվրամիության եւ Արեւելյան գործընկերության երկրների միջեւ տրանսպորտային հաղորդակցության արդյունավետության բարձրացմանը, համատեղ ենթակառուցվածքային առաջնահերթությունների նախանշմանը եւ տրանսպորտային ցանցերի զարգացմանը:

ԵՄ-ն եւ Հայաստանը նոր ավիացիոն համաձայնագիր են կնքել

24.11.2017



ԵՄ-ն Բրյուսելում կայացած «Արեւելյան գործընկերության» գազաթնաժողովի շրջանակում ավարտել է Հայաստանի հետ ավիացիոն համաձայնագրի շուրջ բանակցությունները:

Ենթադրվում է այդ համաձայնագիրը մոտ 87 հազարով ավելացնի ուղևորահոսքը եւ ավելի քան 16 մլն եվրո կրերի առաջին 5 տարիների ընթացքում, ինչպես նաեւ կբարելավի ավիաընկերությունների հասանելիությունը շուկաները՝ ապահովելով ավելի լայն ընտրություն եւ ցածր սակագներ: Տրանսպորտի հարցերով եվրահանձնակատար Վիոլետա Բուկլը նշել է, որ ավիացիոն համաձայնագիրը ոչ միայն կբարելավի շուկաների հասանելիությունը, այլ նաեւ կնպաստի անվտանգության ամենաբարձր ստանդարտների հաստատմանն ու շրջակա միջավայրի պաշտպանությանը: Այն նորն իրան կհաղորդի ավիացիայի զարգացման գործընթացին եւ նոր հնարավորություններ կտա բիզնեսի համար:

Հայկական պատվիրակությունը համաձայնել է իր իշխանություններին հանձնարարել ստորագրել այդ համաձայնագիրը անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտից հետո:

Բրյուսելում ստորագրվեց ՀՀ-ԵՄ նոր համաձայնագիրը

24.11.2017



Բրյուսելում քիչ առաջ Հայաստանն ու Եվրամիությունը ստորագրեցին նոր Համապարփակ եւ ընդլայնված գործակցության համաձայնագիրը: Այն ստորագրվել է Արեւելյան գործընկերության գազաթնաժողովի շրջանակներում:

Համաձայնագիրը ստորագրել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ու ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին, նախագահ Սերժ Սարգսյանի ու Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի ներկայությամբ:

Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ Առցացման համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսվել էին 2010 թվականի հուլիսին, որը ներառում էր նաեւ ազատ առևտրի գոտու ստեղծում, սակայն 2013 թվականի սեպտեմբերին Հայաստանը հայտարարել էր Մաքսային միությանն անդամակցելու մասին եւ հրաժարվել ԵՄ-ի հետ համաձայնագրի կնքել: Այդուհանդերձ, 2015-ին ԵՄ-ն եւ Հայաստանը նորից բանակցություններ սկսեցին՝ արդեն նոր համաձայնագրի կնքելու շուրջ: Այս տարվա մարտին նոր Համապարփակ եւ ընդլայնված գործակցության համաձայնագիրը նախաստորագրվեց, իսկ այսօր արդեն ստորագրվեց:

«Բերքառատ Արցախ». Հեռուստամարաթոն-2017-ի ընթացքում հավաքվել է 12.505.456 մլն դոլար



«Հայաստան» համահայկական հիմնադրամի Հեռուստամարաթոն 2017-ի ընթացքում արձանագրվել է 12.505.456 մլն ԱՄՆ դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում:

«Հայաստան» հիմնադրամից հայտնում են, որ այդ գումարն ուղղվելու է երկու խոշոր ծրագրի. նախ Արցախի տարածքում իրականացվելու է խորքային հորերի հորատում ու նոր ոռոգման ցանցի կառուցում, երկրորդ՝ Արցախում տեղակայվելու են արևային էներգետիկ կայաններ (solar power stations):

Հեռուստամարաթոնն ամեն տարի իրականացվում է ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում: Գործունեության 25 տարիների ընթացքում Հիմնադրամը մոտ 700 000 նվիրատուների շնորհիվ ավելի քան 50 000 ծրագիր է իրականացրել Հայաստանում և Արցախում՝ ընդհանուր 350 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: Կառուցվել, վերակառուցվել և իրականացվել են ավելի քան 605 կմ ճանապարհ, 580 կմ ջրագիծ ու ջրատար, 149 կմ գազամուղ, 70 կմ էլեկտրագիծ, 359 դպրոց և մանկապարտեզ, 24 համայնքային կենտրոն, 500 տուն և բնակարան, 75 առողջապահական հաստատություն, 58 մշակութային ու սպորտային կենտրոն, 100 ջերմոց, 169 կրթական, մշակութային ու գիտական ծրագրեր:



Այս տարվա խոշոր բարերաններն են.

Անանուն բարերար /ԱՄՆ/- 2.500.000 ԱՄՆ դոլար
Սամվել Կարապետյան- 2.250.000 ԱՄՆ դոլար
Չանգեզուրի Պղնձամուխբեղենային գործարան- 350.000 ԱՄՆ դոլար

Սամվել Ալեքսանյան- 200.000 ԱՄՆ դոլար
Վարդանյանների ընտանիք- 125.000 ԱՄՆ դոլար
Վարուժան Գրիգորյան- 100.000 ԱՄՆ դոլար
Բարսեղ Բեգլարյան-100.000 ԱՄՆ դոլար
Անանուն բարերար /ԱՄՆ/-100.000 ԱՄՆ դոլար
Բաղդասարյանների ընտանիք-/ԱՄՆ/-100.000 ԱՄՆ դոլար
Հենրիկ Տեր-Ղուկասյան /Իրան/- 100.000 ԱՄՆ դոլար
Վալերա Գրուպ- 100.000 ԱՄՆ դոլար

Վահե Կարապետյան- 60.000 ԱՄՆ դոլար
Ժան Մարի Ատամիան- 50.000 ԱՄՆ դոլար
Ալբերտ Բոյաջյան-50.000 ԱՄՆ դոլար

Որքա՞ն գումար են փոխանցել մարաթոնին հայ գործարարները



Լոս Անջելեսում այս պահին ընթացող «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա դրամահավաքին առաջիկա ամենամեծ գումարը նվիրաբերել է «Տաշիր» ընկերությունների խմբի սեփականատեր, ռուսաստանաբնակ գործարար Սամվել Կարապետյանը: Հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը ուղիղ եթերում հայտնել է, թե Կարապետյանը մարաթոնին փոխանցել է 2 մլն 250 հազար դոլար գումար:

Ուղիղ եթերում նշվել է նաև, որ Վարդանյաններ ընտանիքը փոխանցել է 125 հազար դոլար, Չանգեզուրի պղնձամուխբեղենային գործարանը՝ 350 հազար դոլար: ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանը փոխանցել է 200 հազար դոլար, իսկ «Ֆլեշ»-ի սեփականատեր Բարսեղ Բեգլարյանը՝ 100 հազար դոլար: Այլ գործարարներ եւս խոշոր գումարներ են նվիրաբերում:

Հիմնադրամի մամուլի ծառայությունից հայտնում են, Հեռուստամարաթոն 2017-ի թեման «Բերքառատ Արցախն» է: Հեռուստամարաթոնից ստացված գումարն ուղղվելու է երկու խոշոր ծրագրի, նախ Արցախի տարածքում իրականացվելու է խորքային հորերի հորատում ու նոր ոռոգման ցանցի կառուցում, երկրորդ՝ Արցախում տեղակայվելու են արևային էներգետիկ կայաններ (solar power stations):

Հեռուստամարաթոնն ամեն տարի իրականացվում է ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում:

Գործունեության 25 տարիների ընթացքում Հիմնադրամը մոտ 700 000 նվիրատուների շնորհիվ ավելի քան 50 000 ծրագիր է իրականացրել Հայաստանում եւ Արցախում՝ ընդհանուր 350 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: Կառուցվել, վերակառուցվել եւ իրականացվել են ավելի քան 605 կմ ճանապարհ, 580 կմ ջրագիծ ու ջրատար, 149 կմ գազամուղ, 70 կմ էլեկտրագիծ, 359 դպրոց եւ մանկապարտեզ, 24 համայնքային կենտրոն, 500 տուն եւ բնակարան, 75 առողջապահական հաստատություն, 58 մշակութային ու սպորտային կենտրոն, 100 ջերմոց, 169 կրթական, մշակութային ու գիտական ծրագրեր:

Նախորդ տարի «Իմ Արցախը» խորագրի ներքո անցկացված հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակվել է 15 428 777 ԱՄՆ դոլար:

Ինդիանան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

06.11.2017

Ինդիանայի նահանգապետ Էրիկ Ջ. Հոլթմերը հանդես է եկել հայտարարությամբ, որը դատապարտում է 1915 թ. Օսմանյան կայսրությունում երեք միլիոն հայերի, հույների, ասորիների ու սիրիացիների սպանությունը:



Այսպիսով Ինդիանան դարձել է ԱՄՆ 48-րդ նահանգը, որը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, հայտնում է Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Արևելյան թևը: Նահանգապետ Հոլթըմբը նաև նոյեմբերի 6-12 շաբաթը «Հայաստանի շաբաթ» է հայտարարել: Նահանգի հայկական համայնքի ներկայացուցիչները ողջունել են նահանգապետի այդ քայլը՝ նշելով, որ այդ հայտարարությունը հիշեցում է ոչ միայն Ինդիանայի քաղաքացիների, այլև Թուրքիայի կառավարության համար, որը շարունակում է ժխտել ցեղասպանությունը ու արդեն ավելի քան մեկ դար փորձում է «պատանդ պահել ճշմարտությունը»:



Փաստաթղթում ասվում է 20 եւ 21-րդ դարերում ցեղասպանությունների հաջորդական ցիկլի մասին, մասնավորապես հիշատակվում է Մերձավոր արևելքի քրիստոնյաների, եզդիների ու այլ փոքրամասնությունների դեմ ԻՊ-ի ցեղասպանությունը: Վերջում ասվում է, որ ճանաչելով ու մշտապես հիշելով Հայոց ցեղասպանության, Հոլոքոստի ու այլ հանցագործությունների մասին՝ «մենք օգնում ենք պաշտպանել պատմական հիշողությունը, այնպես անել, որ նման վայրագություններն այլևս չկրկնվեն»:

ԱԳ նախարարը Բենիամին Նեթանյահուին ներկայացրել է արցախյան կարգավորման



Նոյեմբերի 7-ին պաշտոնական այցով Իսրայելում գտնվող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց Իսրայելի վարչապետ, արտաքին գործերի նախարար Բենիամին Նեթանյահուին:

Հանդիպումը մեկնարկեց ընդլայնված կազմով՝ պատվիրակությունների մասնակցությամբ, ապա շարունակվեց առանձնագրույցի տեսքով:

Ողջունելով հյուրին՝ Իսրայելի վարչապետը կարեւորեց Հայաստանի ԱԳ նախարարի այցն Իսրայել եւ նշեց, որ Իսրայելը պատրաստակամ է ընդլայնել հարաբերությունները Հայաստանի հետ՝ ընդգծելով, որ երկու երկրների միջեւ առկա է համագործակցության մեծ ներուժ:

Ծնորհակալություն հայտնելով այցելության հրավերի եւ ընդունելության համար՝ նախարար Նալբանդյանը Բենիամին Նեթանյահուին փոխանցեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ողջույններն ու բարեմաղթանքները: Հայաստանի արտգործնախարարը գոհունակությամբ նշեց, որ վերջին շրջանում հայ-իսրայելական շփումներում նկատվում է ակտիվացում եւ համոզունք հայտնեց, որ հիմնվելով երկու ժողովուրդների բարեկամական պատմական հարուստ ավանդույթների վրա, համատեղ ջանքերի շնորհիվ Հայաստանի եւ Իսրայելի հարաբերությունները նոր լիքք կստանան:

Զրուցակիցները նշեցին, որ խորհրդանշական է, որ այցը տեղի է ունենում երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյա հոբելյանական տարում, համոզմունք հայտնելով, որ այն լավ հնարավորություն է անցած ճանապարհը գնահատելու եւ հարաբերությունների զարգացման ուղղությամբ նոր քայլեր ձեռնարկելու համար:

Հանդիպմանը հանգամանալից քննարկում տեղի ունեցավ հայ-իսրայելական երկկողմ օրակարգի հարցերի, միջազգային կառույցներում համագործակցության շուրջ: Մտքեր փոխանակվեցին երկկողմ առևտրատնտեսական կապերի աշխուժացման, գործարար կապերի խթանման, իրավապայմանագրային դաշտի ընդլայնման եւ միջազգային կառույցներում փոխգործակցության սերտացման, տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտության եւ կրթության, զբոսաշրջության, գյուղատնտեսության բնագավառներում համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունների շուրջ:

Իսրայելի վարչապետը եւ Հայաստանի ԱԳ նախարարը անդրադարձան Երուսաղեմում հայկական հարուստ պատմամշակութային ժառանգությանը:

Վարչապետ Նեթանյահուն ու նախարար Նալբանդյանը մտքեր փոխանակեցին տարածաշրջանային եւ միջազգային հրատապ խնդիրների, մերձավորարեւելյան զարգացումների շուրջ:

Էդվարդ Նալբանդյանը ներկայացրեց դարաբաշխ հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ջանքերը:

ԱՄԷ դեսպան. Հայաստանի հետ հարաբերությունները հասել են ռազմավարական գործընկերության

30.11.2017



Նոյեմբերի 30-ին Երեւանում Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) հիմնադրման 46-ամյակն են նշել: Միջոցառմանը ներկա էին Հայաստանում դիվանագիտական առաքելությունների հավատարմագրված ներկայացուցիչները, կառավարության ներկայացուցիչները եւ այլ հյուրեր:



Իր ողջունի խոսքում Հայաստանում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպան Ջասիմ Մուհամմեդ Ալ Կասիմին նշել է, որ երկրների միջեւ հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա եւ անցյալ տարի հասել են ռազմավարական գործընկերության մակարդակի:

Նրա խոսքով՝ անցյալ տարվա ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի վերջին այցը ԱՄԷ, Աբու Դաբիի թագաժառանգի առաջիկա այցը Հայաստան, ինչպես նաեւ այս տարվա հուլիսին ԱՄԷ արտգործնախարարի Երեւան այցը վկայում

են այն մասին, որ կողմերը նոր մակարդակի հարաբերություններ են հաստատում:

Դեսպանը շեշտել է, որ երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը այս տարվա 9 ամիսների ընթացքում հասել է 140 մլն դոլարի՝ ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 71 մլն դոլարի ցուցանիշի, իսկ Հայաստանից ԱՄԷ թռիչքների քանակը շաբաթական մինչեւ 18-ի է հասել:



«Ալնիհայտ է, որ երկու բարեկամ երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների զարգացումը, ինչպես նաեւ Հայաստանում ԱՄԷ-ի ներդրումների անը վկայում են Հայաստանի տնտեսության մեջ գործարար վստահության մասին, ինչին նպաստել են նաեւ հայ գործարարների ջանքերը», - ասել է դեսպանը:



Արեւմտյան Հայաստան

Թուրքիայի Այնթափում ջնջվում են հայկական հետքերը. թուրքական կայքի անդրադարձը

Թուրքիայի նախկինում հայաշատ Այնթափ քաղաքի հայկական թաղամասի ոչնչացման վերաբերյալ նյութ է հրապարակել թուրքական GazeteKarinca կայքը:



Կայքն իր հրապարակման սկզբում շեշտել է, թե Այնթափում 1915-ի Հայոց ցեղասպանությունից հետո հայերին պատկանող եւ պատմական արժեք ներկայացնող մի շարք շինություններ վերածվել են մզկիթների կամ սրճարանների: Հայերի մասին ամենակարեւոր հետքը կրող Էրեհան թաղամասի ամենաբարձրադիր վայրում կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին 2010-ին վերանորոգման անվան տակ վերածվեց Փրկության մզկիթի: Բացի այդ, եկեղեցու ներսում գտնված եւ քրիստոնեության մասին վկայող որմնանկարները ջնջել են:

Կայքը նշել է նաեւ, որ Այնթափում կան նաեւ հայերին պատկանած այգիներով եւ մի քանի հարկից բաղկացած տներ, որոնց մեծ մասը վերածվել է սրճարանների կամ որպես բուտիկ-հյուրանոց է ծառայություն մատուցում տեղացի եւ արտասահմանցի զբոսաշրջիկներին:



Սիյունք

Պոլսահայ համայնքի երկընտրանքը՝ նոր պատրիարք ընտրելիս. թշնամանք եւ գաղտնի գործարք

Մի քանի տարի շարունակ Ստամբուլում խոշոր վեճ էր հասունանում պոլսահայ համայնքի անդամների միջև՝ Հայոց նոր պատրիարքի ընտրության ծրագրերի շուրջ. առճակատումը պատմական խոր արմատներ ունի և վերջերս ավելի է սրվել Հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի անբուժելի հիվանդության կապակցությամբ, որն ի վիճակի չէ կատարել իր պարտականությունները Այցեիյանի հիվանդության պատճառով: Այս մասին իր հոդվածում գրում է «Կալիֆորնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր Հարութ Մասունյանը:

Նա, մասնավորապես գրել է.

«Երբ պոլսահայ համայնքի որոշ անդամներ փորձեցին նոր պատրիարք ընտրել անգործունակ Մեսրոպ պատրիարքին փոխարինելու համար, Թուրքիայի իշխանությունները պաշտոնապես հայտարարեցին, որ քանի դեռ գործող պատրիարքը ողջ է, նոր պատրիարք չի կարող ընտրվել: Նույնիսկ այժոռակից պատրիարք ընտրելու խնդրանքը մերժվեց Ստամբուլի նահանգապետի կողմից:



Թուրքիայի իշխանությունները օգտվեցին այն պատրվակից, որ հայ համայնքի 1863 թ. ազգային սահմանադրությամբ նախատեսված չէ այժոռակից պատրիարքի պաշտոն: Սակայն խնդիրն այն է, որ տասնամյակներ առաջ թուրքական կառավարությունն անվավեր էր ճանաչել այդ սահմանադրությունը: Եթե կառավարությունն իր որոշումը կայացնում է չգործող սահմանադրության հիման վրա, ուրեմն նա ճանաչում է դրա վավերականությունը: Եթե սահմանադրությունը վավերական է, ուրեմն հայ համայնքն իրավունք ունի ընտրելու պատվիրակներ, որոնք էլ իրենց հերթին կարող են ընտրել նոր պատրիարք: Ցավոք, հայ համայնքը չմտածեց այս հակասությունը թուրքական կառավարության ուշադրությանը ներկայացնելու մասին:

Մենք հիշում ենք, որ Մեսրոպ պատրիարքը մինչ 1998 թ. իր ընտրությունը նույնպես արժանացավ թուրքական իշխանությունների դիմադրությանը: Ի վերջո, նա գնաց Անկարա և «գործարք կնքեց» փակ դռների հետևում թուրք պաշտոնյաների հետ, ինչը նրան հնարավորություն տվեց պատրիարք ընտրվել: Շուտով նա սկսեց աջակցել տարբեր թուրքական հարցերի, ներառյալ այցեություններ Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ հանդես գալով Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության օգտին և մի շարք այցեություններ Միացյալ Նահանգներ՝ թուրքական իշխանությունների խնդրանքով հրապարակային ելույթներ ունենալու համար:

Այս տարվա սկզբին պոլսահայ համայնքի մի քանի անդամներ որոշեցին նոր պատրիարք ընտրելու մեկ այլ փորձ կատարել, որի շարժառիթը պատրիարքարանի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի հանդեպ ունեցած իրենց դժգոհությունն էր և լիարժեք պատրիարք ունենալու ցանկությունը: Խնդիրն այն էր, որ Աթեշյանը չիրաժարվելն իր պաշտոնից, փակում էր նոր ընտրությունների դուռը, տեղական և համաշխարհային հայության, մասնավորապես Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից ճնշումներից հետո,

պայմանավորվածությունն ձեռք բերվեց, որ Արք.Աթեշյանը հրաժարական կտա և տեղապահ կընտրվի Գերմանիայի հայկական եկեղեցու թեմի առաջնորդ, Արք. Գարեգին Բեկչյանը՝ նոր պատրիարքի ընտրությունները կազմակերպելու համար:

Այս համաձայնությունից շատ չանցած, մի խումբ հայտնի պոլսահայեր հանձնաժողով ստեղծեցին պատրիարքի ընտրությունները նախաձեռնելու համար, թեև համայնքում բոլորն էլ գիտեին, որ թուրքական իշխանությունները դեմ էին նման ընտրություններին: Փաստորեն, մինչ Արք. Բեկչյանը ընտրվում էր տեղապահ, Արք. Աթեշյանը նամակ ստացավ Ստամբուլի նահանգապետից՝ տեղեկանալով, որ թուրքական իշխանությունը չի ճանաչում Արք. Բեկչյանի ընտրությունը և շարունակում է Արք. Աթեշյանին համարել օրինական փոխանորդ: Ցավոք, Արք. Աթեշյանն այդ նամակը ներկայացրեց նախաձեռնակ մարմնին միայն այն բանից հետո, երբ նրանք Արք. Բեկչյանին արդեն ընտրել էին իր պաշտոնում: Այս դրվագն ավելի խորացրեց թշնամությունը Արք. Աթեշյանի դեմ հանդես եկողների մոտ, և նրանք շարունակեցին աջակցել Արք. Բեկչյանին:

Այս երկընտրանքի լուծման համար Արք. Բեկչյանը նամակ գրեց Ստամբուլի նահանգապետին՝ հանդիպում խնդրելով: Պատասխանին 60 օր սպասելուց հետո, Արք. Բեկչյանը մեկնեց Գերմանիա՝ հանդիպելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ, նրա այցելության ժամանակ:

Մինչ Արք. Բեկչյանը գտնվում էր Թուրքիայից դուրս, Ստամբուլի նահանգապետը հանդիպման հրավիրեց Արք. Աթեշյանին, Սահակ եպիսկոպոս Մաշայանին և նախաձեռնող նախաձեռնակ մարմնի ղեկավարին: Պարզ էր, որ նահանգապետը չէր ցանկանում հանդիպել Արք. Բեկչյանի հետ, ում ընտրությունը նա չէր ճանաչում:

Բանավեճն ավելի սաստկացավ տեղի հայ համայնքի այն անդամների միջև, որոնք իրենց ավելի իրատես էին համարում, ընդունելով Թուրքիայի իշխանությունների դերը պատրիարքի ընտրություններում, և նրանց՝ որոնք մերժում էին թուրքական իշխանությունների ցանկացած միջամտություն: Արք. Աթեշյանի կողմնակիցները ընդգծում էին՝ անիմաստ է դեմ լինել թուրքական հզոր իշխանությունների ցանկություններին, որոնք ձերբակալել էին ընդդիմության հազարավոր անդամների և նույնիսկ ձեռնոց նետել այնպիսի հզոր երկրների, ինչպիսիք են Գերմանիան և Միացյալ Նահանգները: Ավելին, Արք. Աթեշյանի կողմնակիցները նշում էին, որ եթե Գարեգին Բ կաթողիկոսը կարող է միջամտել Պոլսո պատրիարքարանի՝ ինքնավար հաստատության ընտրություններին, ապա անկախ նրանից, թե որքան անցանկալի է, հասականալի կլինի, որ Թուրքիայի նախագահը իրավունք կունենա միջամտել իր երկրում տեղի ունեցող ընտրություններին:

Դրությունը ավելի վատթարացավ, երբ մինչ Գերմանիայից Արք. Բեկչյանի վերադարձը, նախաձեռնակ մարմնի հինգ անդամները հրաժարական տվեցին Ստամբուլի նահանգապետի հետ ունեցած հանդիպումից հետո: Հանձնաժողովի մյուս անդամները, մինչ որոշում կայացնելը, ցանկացան սպասել Արք. Բեկչյանի վերադարձին:

Արք. Բեկչյանը, Ստամբուլ վերադառնալուց և նախաձեռնող հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, հայտարարեց, որ նա նամակ կգրի Թուրքիայի ներքին գործերի

նախարարին՝ առերես հանդիպման խնդրանքով: Հաշվի չառնելով Ստամբուլի նահանգապետի հստակ հրահանգները՝ Արք. Բեկչյանը շարունակեց մնալ իր պաշտոնում:

Արք. Բեկչյանի մտադրությունը, մասնավոր հանդիպում ունենալու ներքին գործերի նախարարի հետ, հղի է որոգայթներով: Ինչպես Արք. Սուրբաֆյանի դեպքում, Արք. Բեկչյանը ևս կարող է մասնավոր գործարք կնքել նախարարի հետ՝ խոստանալով այսուհետ կատարել թուրքական իշխանությունների հանձնարարությունները: Արք. Բեկչյանը, որպես Գերմանիայի թեմի առաջնորդ, իր պաշտոնավարման ընթացքում պարբերաբար խոսել է Հայոց ցեղասպանության մասին:

Մյուս տարբերակն այն է, որ Արք. Բեկչյանը կարող է հրաժարվել իր պաշտոնից՝ դուռ բացելով Արք. Աթեշյանի պատրիարք ընտրվելու համար, որը դեմ կլինի պոլսահայ համայնքի մեծամասնության ցանկություններին, սակայն կհամապատասխանի թուրքական իշխանության նախապատվությանը»:

Ֆրանսիայի նախագահը մրցանակ է հանձնել Դինքի կնոջը



Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը անձամբ է Ժակ Շիրակի անվան «Հակամարտությունների կանխարգելման մրցանակը» հանձնել Հրանտ Դինքի կնոջը՝ Ռաբել Դինքին:

Թուրքական Diken-ի փոխանցմամբ՝ Ֆրանսիայի նախագահը շեշտել է, թե Ռաբել Դինքի ղեկավարած հիմնադրամը մեծ աշխատանք է իրականացրել թուրքական լրատվամիջոցներում ատելության դրսևորումները բացահայտելու, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը նպաստելու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում:

Ռաբել Դինքն իր հերթին շեշտել է, որ հիմնադրամը ստեղծվել է Հրանտ Դինքի սպանությունից հետո, երբ ընկերներով որոշում է կայացվել շարունակել Դինքի պայքարը: «Հիմնադրամի նպատակն է Թուրքիայում գլուխ բարձրացնող խտրականության դեմ պայքարը, երկխոսության եւ խաղաղության լեզուն, տարբեր ինքնություններին միմյանց հետ մերձեցնել եւ պահպանել մշակութային -առանգությունը», -ասել է Հրանտ Դինքի կինը:

Զիմբաբվեի փոքրաթիվ հայերն աշխատում են հիմնականում բժշկության ասպարեզում. Լեւոն Արեւշատյան



Զիմբաբվեում բնակվող հայերի թիվը չի գերազանցում 30-ը՝ ներառյալ աֆրիկյան այս պետությունում հաստատվածների թոռներն ու ծոռները: Այս մասին հայտնեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության Զիմբաբվեի գրասենյակի նախկին տնօրեն Լեւոն Արեւշատյանը: Նա Զիմբաբվեում է բնակվում 1998 թվականից:

Լեւոն Արեւշատյանի փոխանցմամբ՝ Զիմբաբվեում բնակվող հայերի մի մասն արդեն քաղաքացիություն ունի, ոմանք՝ ժամանակավոր կեցության իրավունք:

Ինչպես ամենուր՝ այստեղ նույնպես կարողանում են աշխատանք գտնել: «Հայն աշխատասեր է: Այստեղ էլ աշխատում են: Բժշկության ասպարեզում կան հայեր՝ բժիշկներ, ատամնաբույժներ: Ես էլ աշխատում էի որպես համաճարակաբանության գծով խորհրդատու: Կան նաև բիզնեսով զբաղվող հայեր», - պատմում է Արեւշատյանը:

Հայերը Զիմբաբվեում փոքրաթիվ են, բայց կապված են միմյանց. պարբերաբար հանդիպում են, այցելում միմյանց: «Մեծ համայնք չկա, ինչպես Հարավային Աֆրիկայում: Ի դեպ՝ այնտեղ նույնիսկ ցանկանում էին հայկական եկեղեցի կառուցել, բայց հարցը մինչև հիմա չի լուծվել: Հարավային Աֆրիկայում շուրջ 300 հայ կա: Այնքան էլ մեծ թիվ չէ, բայց եթե եկեղեցի ունենային, շատ լավ կլիներ», - ասում է Լեւոն Արեւշատյանը:

Նա 20 տարի աֆրիկյան տարածաշրջանում է աշխատել՝ Նիգերիայից մինչև Կոնգո. գործի բերումով համաճարակաբանն աֆրիկյան ավելի քան 30 երկրում է եղել: Վստահեցնում է, որ Զիմբաբվեի նման ծաղկուն երկիր Աֆրիկայում չի տեսել:

«Այս երկիրը հրաշալի ենթակառուցվածքներ ունի՝ ճանապարհներ, կոմունիկացիաներ, հրաշալի եղանակային պայմաններ են, բժշկության մակարդակն էլ ժամանակին շատ բարձր էր: Բացի այդ, քանի որ Մուզաբենի (Զիմբաբվեի նախկին նախագահը - խմբ.) ուսուցիչ է եղել, մեծ նշանակության էր տալիս կրթությանը: Զիմբաբվեի բնակչության 90 տոկոսը գրագետ է համարվում: Մաչտեսնված բան է, աֆրիկյան ոչ մի երկրում գրագետ բնակչությունն այդքան մեծ թիվ չի կազմում: Օրինակ՝ ՀԱՀ-

ում խոշոր քաղաքներ կան՝ զեղեցիկ շենքերով, բայց ես եղել եմ նաև գյուղական բնակավայրերում. մեծ չքավորություն է տիրում այդ երկրում: Դա համեմատում եմ Զիմբաբվեի հետ եւ կարծում եմ, որ Զիմբաբվեն աֆրիկյան տարածաշրջանի մարգարիտն է, բայց սխալ ձեռքում է հայտնվել: Եթե ճիշտ ձեռքում լինի, հրաշալի հեռանկարներ կունենա եւ կարող է լավագույն պայմաններն ապահովել բնակչության համար», - ամփոփում է Լեւոն Արեւշատյանը:

Միջազգային

Լապշինը մտադիր է ՄԻԵԴ-ում Ադրբեջանի դեմ բողոք ներկայացնել

Բլոգեր Ալեքսանդր Լապշինը մտադիր է ՄԻԵԴ-ում Ադրբեջանի դեմ բողոք ներկայացնել:

«Ինչքան լավն են իմ Մոսկվայի, Լոնդոնի, Թեյ Ավիվի, Կիևի ադրբեջանցի ընկերները, այնքան տհաճ է այդ պետությունը: Մենք մոտավորապես 1-1,5 ամսից կհիշենք նրանց մասին, երբ իմ բողոքը հանսի Ստրասբուրգ ՄԻԵԴ-ին», - puerrto.livejournal.com -ում գրել է բլոգերը:



Լապշինը նաև նշել է, որ «վրդովվելով նրանից, որ ՌԴ-ն իմ Բաքվում գտնվելու ժամանակ պաշտպանում էր իմ իրավունքները, Ադրբեջանի իշխանություններն իրենց ադրբեջանալեզու լրատվամիջոցներով սկսել էին ցեխ նետել Ռուսաստանի դեկլարության վրա:

Սկզբում վիրավորում էին ԱԳՆ մամուլի ծառայության դեկլարար Մարիա Զախարովային:

Այժմ հասել են ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովին՝ նրան բառացի «Ռուսաստանի հայկական արտաքին գործերի նախարար» անվանելով»:

2016 թվականի վերջում Լապշինը Ադրբեջանի խնդրանքով Մինսկում ձերբակալվել էր: Ադրբեջանը նրան առանց Բաքվի հետ համաձայնեցնելու ԼՂ այցելության համար սեւ ցուցակում էր ընդգրկել:

Մեպտեմբերի 11-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Լապշինին ներում շնորհելու մասին հրամանագիր էր ստորագրել:

Միաժամանակ պարզվել է, որ բանտում Լապշինին քիչ էր մնում ինքնասպանության են հասցնելին:

Ալեքսանդր Լապշինը հավաքում է ադրբեջանական բանտում բռնությունը հաստատող փաստաթղթեր Լապշինի կալանավորումը գլխացավանք էր Ադրբեջանի համար. փաստաբան

Լապշին. Կարծիք կա, որ Ադրբեջանին չի կարելի ներել ինձ սպանելու փորձը

Մշակույթ

Խորհրդային Հայաստանի հիմնադրման 97-ամյակի
առիթով (29.11.1920-29.11.2017)

Կրթություն եւ գիտությունը Հայաստանում (1945-1990)

Էդ. Բաղդասարյան

Կրթությունը

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո կրթության ասպարեզում նկատելի տեղաշարժեր կատարվեցին: Դպրոցական եւ բարձրագույն կրթության համակարգերը վերելք ապրեցին: 1958թ. օրենք ընդունվեց կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու եւ 8-ամյա պարտադիր ուսուցման անցնելու մասին: 1966թ. խնդիր դրվեց անցնել ընդհանուր միջնակարգ կրթության: Դրա իրականացումը պահանջեց մեծ ջանքեր եւ շուրջ 10 տարի ժամանակ:

Հետեւողական ուշադրություն էր դարձվում դպրոցական հարմարավետ շենքերի շինարարությանը: Բավական է նշել, որ միայն 1966թ. հանրապետությունում շահագործման հանձնվեց 150 դպրոցական շենք: Մեծ ուշադրություն դարձվեց միջնա-կարգ մասնագիտական կրթությանը եւ երեկոյան ուսուցմանը: 1980թ. միջնակարգ դպրոցների թիվը հասավ 943-ի, իսկ տեխնիկումներինը՝ 70-ի:


Որոշակի առաջընթաց կատարվեց նա եւ բարձրագույն կրթության ոլորտում: Հետպատերազմյան տարիներին կառուցվեցին պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, մանկա-վարժական ինստիտուտների, Երեւանի պետական համալսարանի նոր ուսումնական շենքերը: Արդի տեխնիկական մասնագիտությունների գծով բացվեցին նոր ֆակուլտետներ ու բաժիններ: Մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղեր հիմնվեցին Լենինականում եւ Կիրովականում: Հանրապետությունում գործում էր 14 բուհ, ուր կադրեր էին պատրաստում ավելի քան 100 մասնագիտությունների գծով:

Գիտությունը

Հայրենական պատերազմի ետոն շրջանում՝ 1943թ., հիմնադրվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան: Նրա հիմնադիր անդամների մեջ էին գիտության տարբեր բնագավառների մեծանուն մասնագետներ Լեւոն եւ Հովսեփ Օրբելիները, Աբրահամ եւ Արտեմ Ալիխանյանները, Վիկտոր Համբարձումյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը, գրականագետ Մանուկ Աբեղյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը եւ ուրիշներ: Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահ ընտրվեց արեւելագետ Հովսեփ Օրբելին, որին 1947 թ. փոխարինեց աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը:



Արտեմ Ալիխանյան - 1908-1978




Աբրահամ Ալիխանով 1904-1970

Գիտությունների ակադեմիայի ստեղծումը նոր թափ հաղորդեց գիտական հաստատությունների ուժերը միավորելուն եւ խթանեց հանրապետությունում գիտության զարգացումը:

Տեսական եւ կիրառական մաթեմատիկայի ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները հանգեցրին լայն ճանաչման արժանացած մաթեմատիկական դպրոցի ստեղծմանը: Ֆիզիկայի տարբեր բնագավառներում կատարված հետա-գոտությունների հիման վրա զարգացան արտադրության միանգամայն նոր ճյուղեր՝ կիրեռնետիկան, ռադիոտեխնիկական եւ էլեկտրոնային արտադրությունը:

Աստղագիտության բնագավառում կատարվող ուսումնա-սիրությունները լայն ճանաչման արժանացան: Բյուրականի աստղադիտարանը ակադեմիկոս Վ.Համբարձումյանի գլխավորությամբ դարձավ համաշխարհային հնչեղություն ունեցող աստղագիտության կենտրոն:

Նշանակալի հաջողություններ ձեռք բերվեցին քիմիական եւ կենսաբանական գիտությունների ասպարեզում:



Վիկտոր Համբարձումյան - 1908-1996

Լուրջ ձեռքբերումներ արձանագրվեցին հայագիտության տարբեր բնագավառներում՝ հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, կերպարվեստի, երաժշտության եւ մյուս ասպարեզներում: Գաղափարական

¹ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմութիւն, էջ 444-445:

հարկադրանքի թուլացման պայմաններում 1950-ական թվականների վերջերից պատմա-բանները սկսեցին Հայկական հարցի, ազգային ազատագրական պայքարի, հայկական գաղթավայրերի եւ սփյուռքի պատմության ուսումնասիրությունը: Պատմագրության ասպարեզում կատարված ուսումնասիրությունների հիմքի վրա ստեղծվեց ,Հայ ժողովրդի պատմություն² ութհատույակը, որը մեր ժողովրդի ամբողջական պատմությանը նվիրված, նախադեպը չունեցող ծանրակշիռ կոլեկտիվ աշխատություն էր: Նույն ձեռով ստեղծվեց ,Հայ Նոր գրականության պատմություն³ հինգհատույակը եւ այլն: Արժեքավոր աշխատություններ ստեղծվեցին հայոց լեզվի պատմության, քերականության վերաբերյալ: Հրատարակվեցին մի շարք արժեքավոր բառարաններ: Արվեստագետները ստեղծեցին հայ երաժշտությանը, թատրոնին, կերպարվեստին նվիրված աշխատություններ:

Մատենադարանը գրադարանային կարգավիճակից վերափոխվեց գիտահետազոտական հիմնարկության եւ, տեղափոխվելով ձեռագրերի պահպանության հարմարավետ շենք, սկսեց արդյունավետ զբաղվել սկզբնաղբյուրների ուսումնասիրության ու հրատարակման գործով:


Հանրապետության կյանքում նշանակալի երեւոյթ էր 12 հատորով ,Հայկական Սովետական հանրագիտարանի⁴ ստեղծումը, իսկ 13-րդ հատորը ամբողջությամբ նվիրված է Հայաստանի պատմության ու մշակույթին⁵:

Գրականություն

Հայրենական պատերազմը լայն արտացոլում գտավ գրականության մեջ: Պատերազմի տարիներին գեղարվեստական որոշ երկերի կողքին առաջատար էր դարձել հրապարակախոսությունը: Բազմաթիվ հոդվածներով հանդես եկան Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Հր. Քոչարը, Ն. Չարյանը եւ ուրիշներ: Այդ շրջանի գեղարվեստական ծավալուն գործերից նշանավոր են Դ. Դեմիրճյանի ,Վարդանանք⁶ եւ Ստ. Չոբյանի ,Պապ թագավոր⁷ պատմավեպերը: Հետպատերազմյան առաջին տասնամյակում գրականության մեջ գերիշխող էր դարձել պատերազմի թեմատիկան: Պատերազմին նվիրված ծավալուն երկեր ստեղծեցին Մերո Խանգաղյանը (Մեր գնդի մարդիկ⁸) եւ ուրիշ գրողներ: Չափածո երկերով զինվորի սիրանքը գովեցեցին Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Գեորգ Էմինը եւ շատ ուրիշներ:



Ստ. Չոբյան




Գ. Էմին

Գրողների ավագ սերնդի հետ արժեքավոր գործեր ստեղծեցին երիտասարդ գրողները: Ստեղծագործական նոր բարձունքներ նվաճեց հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից Հովհաննես Շիրազը: Նրա բանաստեղծությունների մեջ առաջնակարգ տեղ էր գրավում հայրենիքի սիրո գաղափարը:



Հ. Շիրազ



Պ. Մեակ

Ամբողջ ուժով հնչեց Պարույր Մեակի տաղանդը, մարդու ազատությունն ու բարոյական վեհ հատկությունները գովերգող նրա մարտական քնարը: Նրա լավագույն ստեղծագործություններից է ,Անրեւի զանգակատուն⁹ պոեմը, որը նվիրված է հայ մեծ երգահան Կոմիտասի կյանքին:

Ստեղծագործական նոր բարձունքների հասան Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից Ռ. Դավոյանը, Լ. Դուրյանը եւ ուրիշներ:

Մի խումբ անվանի գրողներ իրենց ըստեղծագործություններում անդրադարձան հայ ժողովրդի պատմական անցյալին, նրա ազգային ազատագրական պայքարի հերոսական դրվագներին: Լայն ճանաչում ստացավ Հրաչյա Քոչարի ,Նահապետ¹⁰ ստեղծագործությունը, ուր ներկայացվում է հայ ժողովրդի 1915 թ. ողբերգությունը եւ կյանքը շարունակելու հայ մարդու հաստատակամությունը: Նույն թեմատիկայով գեղարվեստական արժեքավոր գործեր ստեղծեցին Խ.Դաշտենցը, Գ. Մահարին, Մ. Գալշոյանը, Ս. Ալաջաջյանը եւ ուրիշներ:

Հասարակության կողմից լայն ընդունելության արժանա-ցան տաղանդավոր արձակագիր Հրանտ Մաթեոսյանի ստեղծագործությունները, ինչպես նա եւ Վարդգես Պետրոս-յանի եւ ուրիշների երկերը:

Նկատելի հաջողություններ ձեռք բերվեցին նաեւ հայ թատերգության (Գ. Տեր-Գրիգորյան, Պ. Չեյթունցյան) եւ գրականության մյուս ճյուղերում:

Թարգմանվել ու հայերեն են հրատարակվել համաշխարհային արժեք ներկայացնող ռուս եվրոպական հեղինակների երկեր: Տպագրվել են հայ դասական հեղինակների երկերի բազմահատույակներ¹¹:

² - Հայոց Պատմություն, Երեւան, 1994, էջ 440-443:

³ - Նույն տեղում, էջ 446-448:

Արվեստ

Հետպատերազմյան ժամանակաշրջանը դարձավ արվեստի տարբեր ճյուղերի՝ երաժշտության, թատրոնի ու կինոյի, կերպարվեստի, ճարտարապետության զարգացման պատմական մի փուլ:

Հայ երաժշտական արվեստը նշանավորվեց ժանրերի բազմազանությամբ: Հայ երգահանների համաստեղության մեջ առաջատար դեր էր կատարում համաշխարհային ճանաչման արժանացած Արամ Խաչատրյանը: Նրա ,Սպարտակ՝ բալետը, բեմադրվելով աշխարհի շատ երկրներում, մեծ հաջողություններ ունեցավ:

Երաժշտության տարբեր ժանրերում արժեքավոր գործեր ստեղծեցին երգահաններ Անտ Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էդվարդ Միրզոյանը, Էդգար Հովհան-նիսյանը, Ավետ Տերտերյանը, Տիգրան Մանսուրյանը եւ ուրիշներ:

Հայ երիտասարդության շրջանում մեծ ընդունելություն գտան Արթուր Մեսյանի, Ռուբեն Հախվերդյանի գործերն ու նրանց կատարումները:

Հայ դասական եւ ժողովրդական երաժշտությունը լայն հասարակությանը հասկանալի ու հոգեհարազատ դարձնելուն նպաստեցին կատարողական լավագույն կոլեկտիվները, Հայաստանի պետական երգչախումբը Հ. Չերիջյանի գլխավորությամբ: Երաժշտական-ազգագրական մի շարք խմբեր մեծ աշխատանք են տանում պատմական Հայաստանի տարբեր շրջանների ինքնատիպ ժողովրդական պարերի ու երգերի վերականգնման ու անհետացումից փրկելու ուղղությամբ:

Հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս լայն ճանաչման արժանացավ երգչուհիներ Գոհար Գասպարյանի, Չարուհի Դոլուխանյանի, դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանի, դիրիժորներ Միքայել Թավրիզյանի, Օհան Դուրյանի, ջութակահարներ Ռուբեն Ահարոնյանի, Ժան Տեր-Մերկերյանի եւ այլ կատարողների վարպետությունը:

Հետպատերազմյան տասնամյակները դարձան հայ թատերական եւ կինոարվեստի վերելքի ժամանակաշրջան: Երեւանից բացի իրենց գործունեությունն էին շարունակում մի շարք շրջանների թատրոններ: 1963 թ. Երեւանում Հրաչյա Ղափանյանի ջանքերով հիմնվեց դրամատիկական նոր թատրոն: Հետագայում բացվեցին երիտասարդական, կամերային, մնջախաղի թատրոններ:

Հանդիսատեսի բարձր գնահատականին արժանացան դերասաններ Մետաքսյա Միմոնյանը, Վարդուհի Վարդե-րեսյանը, Միեր (Ֆրունզիկ) Մկրտչյանը, Խորեն Աբրահամյանը, Սոս Սարգսյանը եւ ուրիշներ:


Կինոարվեստի զարգացումը սկսվեց 1960-ական թվականներից: Այն նշանավորվեց Փ. Դովլաթյանի ,Բարեւ, ես եմ՝ եւ Հ. Մալյանի ,Եռանկյունի՝ եւ ,Մենք ենք, մեր սարերը՝ գեղարվեստական կինոնկարներով: Հայ կինոարվեստում նշանավոր եր եւույթ էր մեծատաղանդ ռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ,Նռան գույնը՝ նկարը, որը նվիրված է հայ մեծ բանաստեղծ-երգիչ Սայաթ-Նովային:

Այս շրջանում մեծ ներշնչանքով գործում էր հայ գեղանկարչության նահապետը՝ Մարտիրոս Սարյանը: Անվանի վարպետի ստեղծագործությունը վիթխարի ազդեցություն ունեցավ հայ գեղանկարչության զարգացման

վրա: Մնայուն գործեր ստեղծեցին նկարիչներ Հ. Չարդարյանը, Գր. Խանջյանը, Է. Իսաբեկյանը, հայրենադարձ նկարիչ Հարություն Կալենցը եւ ուրիշներ:



Մինաս Ավետիսյան Միեր Մկրտչյան
Լայն ճանաչման արժանացավ կյանքից շուտ հեռացած Մինաս Ավետիսյանը: Հայաստանի բնությունը փայլուն պատկերներով ներկայացրեցին Հակոբ Հակոբյանը եւ շատ ուրիշներ:



Սերգեյ Փարաջանով

Քանդակագործության մեջ իրենց ստեղծագործու- յուններով աչքի ընկան Դ. Չուբարյանը, Ս. Բաղդասարյանը, Ն. Նիկողոսյանը, Լ. Թոքմաշյանը եւ ուրիշներ: Հայ արվեստի նվաճումներից են Սասունցի Դավթի (քանդակագործ՝ Ե. Քոչար), Ալեքսանդր Թամանյանի (քանդ.՝ Ա. Հովսեփյան), Մարտիրոս Սարյանի (քանդ.՝ Լ. Թոքմաշյան) արձանները՝ Եր եւանում, Դավիթ Բեկի հուշարձանը Կապանում (քանդ.՝ Ս. Բաղդասարյան) եւ այլն:

Հայ կերպարվեստի լավագույն ստեղծա- գործությունները բազմիցս ներկայացվել են միջազգային ցուցահանդեսներում եւ արժանացել բարձր գնահատանքի:

Այս շրջանում հայ ճարտարապետությունը լուրջ առաջը-նթաց ապրեց: Կառուցապատվեցին քաղաքները, կառուցվեցին մշակույթի, արտադրական բազմաթիվ շենքեր, հուշահա-մալիրներ եւ այլն: Ծարտարապետության մեջ որոշակի էր հայկական ճարտարապետության ավանդույթներից ըստեղծա-գործաբար օգտվելու ձգտումը:

